Summary

GREEK HISTORIAN POLYBIUS AS BEGINNER OF CRITICAL-ANALYTICAL APPROACHES TO HISTORY
(Issues in the Methodology of History)

ARARAT HAKOBYAN

It is known that the first building blocks of the theory and methodology of history were largely laid by outstanding historians of the Ancient World: Herodotus, Xenophon, Thucydides, Plutarch, Polybius, Tacitus and others. When assessing the theoretical and methodological merits of the mentioned historians, first of all, they should be assessed in this era, which became the basis for the development of further world historical thought and methodological approaches to the study of history.

In particular, a consideration of Polybius's "General History" shows that his ideas, observations, and methodological approaches to history remain unrivaled in his time and space. His historiographical and methodological observations were based on the extraction of historical material, real history, reality, a distortion-free presentation of history, based on the fact that the only guarantee of the impartiality of historical science is truth. And made observations and analytical approaches to history, in particular with episodes of the Punic Wars, analysis, accumulated experience and lessons to be learned. It is worth noting that for thousands of years Polibio's work served not only as a theoretical and methodological guide, but also as a rich historical source for his era.

In particular, thoughts and judgments about the idea of the state and forms of government put forward by Polybius, discussions about historical and comparative parallels, the cause-and-effect relationship of phenomena, historicity, etc. served as theoretical and methodological guidance on further reforming the institution of statehood, improving it and giving more democracy.

They were further developed during the Renaissance, Reformation, Humanism and Enlightenment, and then in New and Contemporary times.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՒ ԱՍԻԱՅԻ ՄԻՋՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՆԳՈՅՑՈՒՄ Ժ.-ԺԴ. ԴԱՐԵՐՈՒՄ ԸՍՏ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐԻ

Հայաստանը Ժ.-ԺԴ. դարերում գտնուում էր քաղաքատնտեսական անկայուն, բարդ իրավիճակում, երբ օտար կեղեքիչների յարձակումների ժամանակ երկիրը ժամանակ առ ժամանակ ապրում էր իր հերթական կորուստները։

Ջնայած Հայաստանի այդ անկայուն, խառնաշփոթ իրավիճակներին հայկական միջնադարեան շուկաներում քարաւանային առեւտրի շնորհիւ տեղի էին ունենում ոչ միայն օտար դրամների ներթափանցում, այլեւ գործում էր ժամանակի տարբեր տարադրամների փոխանակման կենտրոններ շուկաներում։ Հայաստանի աշխարհագրական դիրքը կարեւոր նշանակութիւն ունէր առեւտրի համար։ Հնագիտական պեղումների, ինչպէս նաեւ պատահական գտածոների արդիւնքում գտնուել են առանձին դրամներ կամ դրամական գանձեր ինչը վկայում է, որ Հայաստանում լայն տարածում են ունեցել օտար պետութիւնների կողմից հատուած դրամները, որոնք ազատ ընդունուում էին եւ շրջանառուում հայկական շուկաներում։

Ժ.-ԺԴ. դարերում Հայաստանի համար աւերիչ էր դառնում ոչ միայն օտար զաւթիչների զէնքն այլեւ նրանց կողմից վարած դրամա-առեւտրային քաղաքականութիւնը։ Հաստատուելով տարածաշրջանում նրանք իրենց թողարկած դրամներով ոչ միայն դրամական համակարգի նոր կանոններ այլեւ դրամների միջոցով տարածում էին մահմետական դաւանանքի գաղափարախօսութիւնը։ Քաղաքական հանգամանքներից դրդուած Հայաստանը չունէր իր ազգային դրամն, ինչի պատճառով ստիպուած էր օտար նուաճողների կողմից հատուած եւ շրջանառուող դրամներով իրականացնել առեւտրական գործարքները։

Հայաստանում Ժ. դարում աբասեանների դրամներից բացի շրջանառութեան մէջ էին նաեւ խալիֆայութիւնից անկախ կամ կիսաանկախ մահմեդական ամիրաների արաբական դիրհեմները։

Ժ. դարում վերջին յատկապէս ԺԱ. դարում Հայաստանում աստիճանաբար արծաթէ դրամների նուազում է դիտարկւում։ Արդէն Բագրատունիների անկման տարիներին արտաքին առեւտրի շնորհիւ Արեւելքի երկրներից Հայաստան եկող արծաթ դրամների առատ հոսքը խիստ նուազել էր։ Արծաթի սղութիւնը ԺԱ. դարում որոշակի էր դարձել նաեւ Բիւզանդական կայսրութեան մէջ։ Դրամագիւտերը վկայում են, որ արծաթի բացակայութեան պատճառով Հայաստանում շրջանառուել են բիւզանդական ոսկեայ եւ պղնձէ անանուն դրամները։ Հայաստանում ապրանքադրամական յարաբերութիւններում բիւզանդական արծաթէ դրամներ չեն գտնուել։ Շրջանառութեան մէջ իշխողը բիւզանդական սօլիդն էր։ ԺԱ. դարի երկրորդ կէսին Տաշիր Զորագետի Բագրատունեաց ճիւղի փոքրիկ թագաւորութիւնը բիւզանդական այդ դրամների ընդօրինակութեամբ Քրիստոսի պատկերով, բայց հայերէն գրերով պղնձեայ դրամներ թողարկեց, որոնք բացառիկ տեղ են գրաւում Միջնադարեան Հայաստանի դրամական գանձարանում։ Հայերէն գրերով յիշեալ դրամների թողարկումը ունեցել է տեղական նշանակութիւն եւ Լոռուայ առեւտրատնտեսական սահմաններից դուրս չէ անցել[1]։

Նկար 1, Բիւզանդական անանուն ֆոլիս, պղինձ,

1 Z. BEDOUKIAN, *A Rare Armenian Coin* , SMS, Special Publication N1, Los Angeles 1981, pp.181-184, Ա. ՄՈՒՇԵՂԵԱՆ, *Հայերէն գրերով առաջնածին մետաղէ դրամը.* Armenian Numismatic Journal (ANJ) Vol. 17, 1991, էջ 5-9:

Նկար 2, Բիւզանդական նոմիզմա, ոսկի,
Կոստանդին Ը.

Հայաստանի դրամական շրջանառութիւնը ապրում էր մի շրջան, երբ Միջին Ասիայից մինչեւ Փոքր Ասիա պետութիւնները դադարել էին արծաթէ դրամներ թողարկելը։ Մօտ 200 տարի տեւեց այսպէս կոչուած արծաթէ ճգնաժամը Արեւելքի դրամական տնտեսութեան մէջ[2]։

Արծաթի սղութեան պատճառով շատ քաղաքներում դադարեցին դրուագել լիարժէք արծաթէ դրամներ։ Նրանց փոխարէն սկսեցին օգտագործել վարկային նշանակութիւն ունեցող պղնձէ դրամներ։ Հայաստանում այդ երեւոյթը դիտւում է նախ եւ առաջ Շադադեան դրամներով։ Դրանք արծաթի նուաստ պարունակութեան դիրհեմներ էին, որոնք ԺԱ. դարում տարածուած էին Հայաստանի հիւսիս–արեւելեան շրջաններում։ Լինելով վատորակ արծաթից այդ դրամները միջազգային շուկայ դուրս չէին գալիս եւ նախատեսուած էին միայն ներքին շուկայի համար։

Նկար 4, Շադադեաններու դիրհեմ, արծաթ,
ալ-ՖԱԼԻԴ Մուհամեդ, Գեանջա

2 Խ. ՄՈՒՇԵՂԵԱՆ, *Դրամական շրջանառութիւնը Հայաստանում,* Երեւան 1983, էջ 215:

Արդէն ԺԲ. դ. սկզբից Հայաստանում, երկրի հիւսիս արեւելեան շրջաններում արծաթէ դրամներն իսպառ վերացան։

ԺԲ. դարում Հայաստանում ապրանքափոխանակութեան գործարքներում լայն տարածում էին ստացել Սելջուկեան ծագում ունեցող պղնձեայ դրամները։ Սելջուկները հատում էին նաեւ ոսկէ դրամներ, որոնց վրայ յիշատակւում էին սելջուկ ամիրների տիտղոսաւոր անունները, ինչպէս նաեւ նրանց մահմեդական դաւանանքի (Սուննի) արաբական գրելաձեւը։ Հարաւային եւ Արեւմտեան Հայաստանում սելջուկեան պղնձէ դրամները թողարկում էին Սեբաստիա, Մալաթիա, Երզնկա, Մարդին, Խլաթ, Մանազկերտ եւ այլ քաղաքներում։ Նրանք շրջանառւում էին պղնձէ Արտուքեան, Զէնգեան, Դանիշմանդեան, Մենգուջաքեան, ծագման եւ վարկային նշանակութիւն ունեցող այլ դրամների հետ։

ԺԲ. դարում, մանաւանդ ԺԳ. դարում սկզբին ընդլայնուեց վրաց Բագրատունի գահակալների պղնձէ դրամների տարածումը Հայաստանի հիւսիս-արեւելեան տարածքներում։ Դրանք առաւելապէս Թամարա թագուհու գահակալութեան տարիներին թողարկուած վրացերէն եւ արաբերէն արձանագրութիւններով պղնձադրամներ էին, որոնք շրջանառութեան մէջ անմիջապէս ճանանչելի էին իրենց վրայ ունեցած Բագրատունեաց տոհմական նշանով։ ԺԳ. դարում առաջին կէսին հայկական քաղաքներում տարածուած վրաց դրամների վերջին խումբը Ռուսուդան թագուհու պղնձէ դրամներն էին։ Վրացական պղնձէ դրամներն շրջանառութեան մէջ ունէին վարկային նշանակութիւն։

Նկար 5, Վրացական, պղինձ,
Բագրատունեաց Թամարա թագուհու եւ Դաւիթ Սոսլանի գահակալութեան
տարիներին թողարկուած երկլեզուեան դրամ, 1125-1230

Նոյն ժամանակամիջոցին տարածաշրջան էին թափանցում Իլդեգիզեան աթաբեկների (Իրաքի սելջուկների վասալները) պղնձադրամները։ Հայաստանում յայտնաբերուած իլդեգիզեան վերջին պղնձէ դրամները վրացական պղնձէ դրամների նման ունէին վարկային նշանակութիւն։

Նկար 6, Իլդեգիզեան դիրհեմ, արծաթ

Նկար 7, Իլդեգիզեան ֆելս, պղինձ, Արաբական արձանագրութեամբ

Ենթադրւում է, որ Դուին քաղաքն առանձին դէպքերում եղել է նաեւ իլդեգիզեան դրամների թողարկման կենտրոններից մէկը հիւսիս-արեւելեան Հայաստանում։ Այդ դրամները առատօրէն յայտնաբերուել են Շիրակում, Այրարատում եւ վկայում են Վրաստանի, ինչպէս նաեւ Աղուանքի հետ ունեցած Հայաստանի առեւտրական կապերի մասին[3]։

ԺԳ. դարում սկզբին Հայաստանում եւ հարեւան երկրներում արդէն աւարտուել էր արծաթի ճգնաժամը եւ Մերձաւոր Արեւելքի պետութիւնները կրկին սկսել էին թողարկել լիարժէք

3 Х. Мушегян, *Денежное обращение Двина по нумизматическим данным*, Ереван1962, с. 171.

արծաթէ դրամներ։ ԺԳ. դարում առաջին կէսին հայկական շուկաներ թափանցեցին մի կողմից Փոքր Ասիայի սելջուկեան, միւս կողմից՝ Արեւելքը նուաճող մոնղոլական իշխանութիւնների դրամները։ Մոնղոլական արշաւանքները Հայաստանի եւ նրա մերձաւոր երկրների վրայ ահաւոր կործանիչ հարուածներ ու հետեւանքներ բերեցին՝ Հայաստանն ունեցաւ անդառնալի կորուստներ եւ ապրեց համատարած անկում։ Մոնղոլներն իրենց լայնածաւալ տիրակալութեան տարբեր երկրներում թողարկում էին ոսկէ, արծաթէ ու պղնձէ դրամներ։

Նրանց դրամները տարածւում էին ամէնուրեք։ Դրամների վրայ արձանագրւում էին (չիի) դաւանանքի, արաբերէն գրութիւններ վերցուած զուրանից (ինչն նշւում էր կամ ընդարձակ կամ կրճատ, երբեմն էլ՝ առանձին ասոյթների ձեւով), դրամի վրայ նշւում էր իշխող խանի տիղոսաւոր անունը, տարեթիւը, դրուագման վայրի անունը։

Հայաստանում գտնուած մոնղոլական ծագում ունեցող վաղագոյն արծաթէ դրամները վերաբերում են 1232-1233 թուականներին։ Դրանք նախապէս առանց իշխանական անունների արծաթ դրամներ են (դիրհեմներ) թողարկուած Ջինգիզ խանի գահաժառանգի՝ Ուգեդեյի ինքնակալութեան տարիներին Իրանում, Վրաստանում։ Մոնղոլական արծաթ դրամների տարածմամբ դրամական շրջանառութիւնը Հայաստանում թեւակոխում էր զարգացման նոր փուլ[4]։ Հայկական շուկաներ էին հաստատուն թափանցում Արեւելքը նուաճող մոնղոլական կայսրութեան դրամները։

Նկար 9, Մոնղոլական դիրհեմ, արծաթ, արաբերէն արձանագրութեամբ, Արու Սահդ, Երեւան

4 Խ. ՄՈՒՇԵՂԵԱՆ, *Հայոց պատմութեան Դրամագիտականը*, Երեւան 1997, էջ 48:

Առեւտրում վաղ մոնղոլական արծաթէ դրամները բարձր էին գնահատւում։ Փոխանակութիւնը ոսկու եւ արծաթի միջեւ նշւում էր մօտ 1:7 յարաբերութեամբ։ Դրամական միաւորների անուանումները չէին փոխուել։ Խալիֆաթի ժամանակներից միջազգային շուկայում ճանաչում գտած դենար, դիրհեմ, եւ ֆելս անունները, ոսկեայ, արծաթէ ու պղնձէ դրամների համար պահպանուել էին նոյն անուանումները։ Բացի նուազ քաշի պղնձեայ դրամներից թողարկւում էին նաեւ նրանց կրկնակի կշիռով դրամներ, որոնք կոչւում էին դանգ։

Մինչեւ ԺԳ. դարու երկրորդ կէսը միջազգային շրջանառութեան մէջ հանդէս էին գալիս մոնղոլական ծագում ունեցող արծաթ դրամները Ռումի սուլթանութեան մէջ՝ Սեբաստիայում (Սըւազ), Կոնիայում եւ Կեսարիայում (Կայսարիա) թողարկուած դիրհեմների հետ միասին։ Յետագայում սելջուկեան արծաթ դրամները նուազեցին եւ արդէն ԺԳ. դարում, աւարտին Հայաստանի դրամական տնտեսութեան մէջ առաւելութիւնը բացայայտորէն անցաւ Իրանի մոնղոլական խաների թողարկած դրամներին։ Լայն տարածում էին ստացել Ջինգիզ Մանգու խանի եւ նրա եղբօր Հուլաղուի դրամները, ինչպէս նաեւ մուսուլմանական հաւատի արաբերէն արձանագրութեան դրոշմով մոնղոլական անանուն դրամները, որ այդ տարիներին թողարկւում էին։

Աբաղա խանի (1265-1281) իշխանութեան տարիներին հայկական քաղաքներում թողարկւում էին նաեւ քրիստոնէական իմաստի հայերէն արձանագրուած պղնձեայ դրամներ, արաբերէն ու ոյգուրերէն գրութիւններով։ Արդէն ԺԳ. դարու, վերջինս սնանկացել էր Հուլաղույեանների դրամական տնտեսութիւնը։ Դադարեցուեց ազնիւ մետաղների՝ մաքուր ոսկուց եւ արծաթից դրամների թողարկումը։ Հուլաղույեանների անկման վերջին տարիներին, մասնաւորապէս Սուլեյման խանի (1339-1344) ժամանակ Անի քաղաքում հատուեցին պղնձէ դրամներ մոնղոլական գրութեամբ եւ մահմեդական աշխարհին ոչ ընդունելի մարդկային պատկերներով դրամներ։ Այդ դրամները շրջանառութիւն ունէին միայն ներքին շուկայում[5]։

5 Խ. ՄՈՒՇԵՂԵԱՆ, *Դրամական շրջանառութիւնը Հայաստանում 12-13-րդ դդ.*, ՀԺՊ բազմահատորեակ, հտ. Գ., Երեւան 1976, էջ 579-581:

Նկար 10, Մոնղոլական, բրոնզ, Չինգիզ խան

ԺԴ. դարու սկզբին Ղազան Մահմուդ խանի հրամանով Հուլաղույեանները սահմանեցին նոր չափագիտական համակարգ, որի հիմնական միաւորը համարուեց 2,145 գրամ արծաթի օրինական չափով դիրհեմը։ Հանդէս եկան դրամական նոր միաւորումներ ոսկու գծով ղազանի եւ արծաթի գծով միրի անուններով։ Փոխանակութիւնը ոսկու եւ արծաթի միջոցով կատարւում էր 1։12 յարաբերութեամբ։ Թողարկւում էին նաեւ երեք մսխալ կշռով արծաթ դրամներ, որոնք կոչւում էին արծաթ դինար։ Երեք արծաթէ դինար միրի կոչուող դրամական միաւորը համարւում էր ամենախոշոր արծաթէ միաւորը։ Շուկայում հանդէս եկաւ ***թուման*** *կոչուող հաշուային միաւորը, որը հաւասար էր 10.000 արծաթ դինարի։ Ղազան Մահմուդի ռեֆորմով սահմանուած դրամները թողարկւում էին Հուլաղույեանների տիրապետութեան տակ գտնուող բազմաթիւ քաղաքներում, այդ թւում նաեւ Անի, Գառնի, Պարտա, Նախճաւան Խլաթ, Արճէշ, Կարին, Երզնկա, Սեբասիա եւ այլ քաղաքներում*[6]*։ Սակայն նրա արծաթէ դրամների չափագիտական տուեալները կայունութիւն չունեցան։ Արծաթէ դրամի կշիռը աստիճանաբար նուազում էր եւ արդէն 1336 թ այն թողարկւում էր 1,43 գրամ միջին քաշով։ Ներքին շուկայի զարգացման պահանջով Անի քաղաքում դրուագւում էին նաեւ պղնձէ դրամներ։ ԺԴ. դարի կէսին արծաթ դրամի կշիռը նուազելով հասաւ մօտ կէս գրամի։ Արծաթի ճգնաժամը դրամագործութեան մէջ դարձել էր բացայայտ։ Ինչպէս Հայաստանում թողարկուած այնպէս էլ հայկական շուկաներ թափանցած դրամները (դիրհեմները) ունէին թեթեւ քաշ։ Հայաստանում ոչ Հուլաղույեանների եւ ոչ էլ նրանց*

6 Խ. ՄՈՒՇԵՂԵԱՆ, *Հայոց Պատմութեան Դրամագիտականը*, Երեւան 1997, էջ 51-52:

յաջորդների ժամանակ հայկական դրամներ չէին թողարկւում։ Ապրանքափոխանակութեան պահանջով Հայկական լեռնաշխարհ են բերուել արեւելեան քաղաքներում թողարկուած դրամներ։

Նկար 11, Հուլաղույեան ֆելս,
Աբաղա Խանի գահակալութեան տարիների, առանց տարեթիւ
հայերէն եւ ույղուրերէն գրութիւններով դրուագուած

Հայերը ողջ իրենց գոյութեան ընթացքում շարունակ պայքարում էին Բիւզանդիայի, Փոքր Ասիայի Սելջուկեան ամիրութեան, Մոնղոլական եւ խաչակրած արշաւանքների դէմ։ Զնայած մշտական պայքարներին միջազգային լայն կապեր ունեցող վաճառական քաղաքները հայկական շուկաների հետ սերտ կապեր ունէին։ Ուշագրաւ է ԺԲ. դարում Եդեսիա քաղաքում խաչակիր սպետների թողարկած (24 ֆոլիսների) պղնձէ դրամների առկայութիւնը Անի քաղաքում[7]*։ Այդ դրամների գտածոները վկայում է ԺԲ. դարում հայոց Անի մայրաքաղաքի կապերը Լեւանտի հետ։*

Մոնղոլական ճնշման հետեւանքով ահաւոր չափերի հասաւ ժողովրդի արտագաղթը, Հայաստանի գիւղերն ու քաղաքները սկսեցին ամայանալ։ Բազմահազար ընտանիքներով հայերի հեռանալը Հայկական լեռնաշխարհից եւ հաստատուելը Միջերկրականի հիւսիս-արեւելեան մասում, Փոքր Ասիայի Կիլիկիա երկրամասում, հնարաւորութիւն տուեց նրանց կերտել նոր հայրենիք, որը կոչուեց Հայկական Կիլիկիա։

7 Խ. ՄՈՒՇԵՂԵԱՆ, *Անի ու Դուին քաղաքներում տարածուած դրամները*, «Հայ դրամագիտական հանդէս», 1989, էջ 121:

ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄՆԵՐ

Հայոց Կիլիկիան իր գոյութեան շուրջ 300 տարիների ընթացքում թողեց հսկայական մշակութային ժառանգութիւն, ինչի շնորհիւ բացայայտուեցին ու հարստացան ազգային պատմութեան, մշակոյթի, ինչպէս նաեւ հայ ինքնութեան պահպանման փառաւոր էջերը։ Արեւելքի միջնադարեան դրամների զանգուածում Հայոց Կիլիկեան իշխանաւորները եւ թագաւորները ներքին եւ արտաքին առեւտուրը խթանելու համար առատութեամբ հատեցին իրենց ազգային դրամները։ Դրամի ներկայութիւնը եւ դրամաշրջանառութեան ճիշտ կազմակերպումը ոչ միայն պետականութեան խորհրդանիշ էր այլեւ խիստ կարեւոր արհեստի եւ առեւտրի զարգացման համար։ Նրանք ոչ միայն իրականացրեցին դրամաթողարկում եւ այդ դրամներով վարեցին տնտեսութիւնն այլեւ բացեցին այդ դրամներով նոր էջ հայ դրամագործութեան պատմութեան բնագաւառում։ Դրամները ինքնատիպ էին, Արտաշէսեան դրամներից միանգամայն տարբեր։ Կիլիկեան հայկական դրամը հանդէս եկաւ իր նոր պատկերատիպով եւ մետաղական ու դրամակշռային նոր չափանիշներով։

Հայկական Կիլիկեան դրամները դարձան Ոսկէ Միջուկը հայ դրամագիտութեան հետազօտողների համար։ Սկսած ԺԷ. դարու կէսերից Կիլիկեան Հայկական դրամները մշտապէս եղել են հայ եւ օտար դրամագէտ-պատմաբանների ուշադրութեան կենտրոնում։ Կիլիկեան դրամների մասին կարելի է գրել եւ խօսել անսպառ եւ շատ հետազօտողներ հանդէս են եկել, թէ՛ առանձին յօդուածներով, թէ՛ մենագրութիւններով։

Դրամագործութիւնը Կիլիկիայի հայկական պետութիւնում դրուեց բարձր հիմքերի վրայ։ Մինչեւ հայոց թագաւորութեան հաստատումը հայկական դրամների թողարկումը սկսուել էր դեռեւս Ռուբինեանների նախաթագաւորական շրջանում, առաւելապէս վերջին իշխան Լեւոնի օրօք։ Արեւելքի միջնադարեան դրամների մեծ զնագուածում Կիլիկեան Հայաստանի դրամները գերազանցապէս յայտնի են մեսրոպատառ գրերով։ Դրանք ոսկեայ, արծաթեայ ու պղնձեայ մասամբ էլ, բիլոնե[8] *դրամներ են։ Այդ նախաթագաւորական ժամանակների Ռուբինեան դրամներից հատ ու կենտ նմոյշներով պահպանուել են Թորոս Ա. (1100-1123), Թորոս Բ. (1145-1169) ու առաւելապէս Ռուբինեան վերջին իշխան Լեւոնի (1187-1198) պղնձեայ դրամները, որոնցով կատարուել է երկրի ներսում ընթացող մանր առեւտրական գործարքները։ Դրամների վրայ յատուկ կնիքով դրոշմուած են Ռուբինեան իշխանների անունները, հայերէն արձանագրութեամբ, ինչպէս նաեւ առանձին դէպքում նրանց դաւանանքը խորհրդանշող քրիստոնէական խաչ նշանը։ Իշխանապետութեան շրջանի դրամները խիստ հազուագիւտ են եւ յայտնի են առանձին նմոյշներով։ Ներկայումս յայտնի չէ, թէ դրամակշռային ինչ համակարգով են թողարկուել դրանք եւ պատկերատիպի ու արձանագրութիւնների ինչ հիմնական տեսակներով են հանդէս եկել։ Շատ հարցեր Ռուբինեանների իշխանական շրջանի դրամների վերաբերեալ դեռ պարզուած չեն դրամների սակաւութեան եւ վատ պահպանուածութեան պատճառով։ Սակայն ներկայումս Կիլիկեան հայկական դրամների վերաբերեալ լայնածաւալ ուսումնասիրութիւններ են կատարւում, որոնք բերել են նոր հարցադրումներ ու նոր հայեցակէտեր։ Այնուհանդերձ բոլոր ժամանակների հետազօտողների կողմից արձանագրուել է, որ Կիլիկիայում Հայկական դրամների թողարկումը սկսուել է իշխանական շրջանում եւ այդ դրամները հատուել են միայն պղնձից։ Համաձայն վերջին ուսումնասիրութիւնների յայտնի են վեց իշխանական դրամներ*[9]*։ Նորովի է հետազօտուել նաեւ Կիլիկիայի պատմաքաղաքական պատմութիւնը*[10] *որտեղ նոյնպէս ներկայացուել են նոր հայեցակէտեր։ Օրինակ՝ ներկայումս հերքւում են Լեւոն բռնակալի մասին նախկինում ընդունուած հայեցակէտերը, հետեւաբար չեն կարող գոյութիւն ունենալ նաեւ նրա դրամները, որոնց ժամանակին անդրադարձել են շատ դրամագէտներ։*

8 Արծաթի եւ պղնձի համաձուլուածք։

Նկար 12, Կիլիկիայի իշխանապետութեան դրամ, պղինձ, Ռուբէն Բ., 1169-1170

9 Ռ.ՎԱՐԴԱՆԵԱՆ, *Կիլիկեան հայկական դրամագիտական խնդիրներ*, ՀԴՀ 1, 3-19: *Լեւոն I-ի «ոսկե դրամները»*, ՀԴՀ 1-2, 2012, էջ 3-30:

10 Լ. ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ, *Խաչակիրները եւ հայերը*, հտ. Բ., Երեւան 2007:

Յայտնի է Ռուբինեան իշխաններից վերջին Լեւոնը, որ 1198 թուականին, հռչակուեց առաջին թագաւոր ու անուանակոչուեց Լեւոն Մեծագործ, ով իսկապէս արժանի էր այս տիտղոսին, քանի որ դժուարին քաղաքական իրավիճակում կարողացաւ հիմնել հայկական թագաւորութիւնը: Նա եղաւ առաջին թագաւորը, որ հատեց հայերէն գրերով մեծաքանակ դրամներ: Պատկերների ու գրութիւնների ձեւաւորման, նրանց արտայայտած իմաստի ու նշանակութեան առումով, Լեւոն Ա.ի դրամները օրինակ հանդիսացան Կիլիկիայում յետագայում թողարկուող դրամների համար: Շրջանառութեան մէջ հիմնական դրամային միաւորը հանդիսանում էր արծաթեայ դրամը: Այդ տարիներին հայ ազգային դրամների թողարկումը Կիլիկիայում կատարուել է շատ աւելի առատօրէն քան երբեւիցէ հայ իրականութեան մէջ: Եւրոպական շուկաներում մինչ օրս յայտնաբերւում են Կիլիկեան Հայաստանի թագաւորների դրամները, որոնք վկայում են, որ արծաթէ ու պղնձէ դրամները շրջանառուել են առեւտրում, ոչ միայն նրա թագաւորութեան տարիներին, այլ ողջ ԺԳ դարու, ընթացքում: Լեւոն Ա.ի ժամանակ կարգաւորուեց երկրի դրամային տնտեսութիւնը եւ հիմնականում թողարկւում էին արծաթեայ ու պղնձեայ դրամներ, ինչպէս նաեւ ոսկեայ դրամներ առանձին դէպքերում: Ինչպէս Արեւելքի շատ երկրներում, այնպէս էլ Կիլիկիայում հայկական տնտեսութեան ու շրջանառութեան համար բնորոշ չէին ոսկեայ դրամները: Ոսկէ թողարկումները սահմանափակ եւ հազուագիւտ հանդէս էին գալիս իբրեւ շքադրամներ, որոնց դրուագումը կատարւում էր արծաթեայ դրամների կնիքներով: Համաձայն վերջին հետազօտութիւնների Լեւոն Ա.ին վերագրուած ոսկէ դրամները համարւում են ԺԹ.-Ի. դարերի կեղծիքներ[11]*: Դրամագէտը իր աշխատատար ուսումնասիրութեան մէջ անրադարձել է նաեւ Լեւոն Ա.ի «օծման դրամներ»ին: Այդ դրամները վերագրելով Լեւոն Գ.ին քանի որ իրենց ոճապատկերագրական առանձնայատկութիւններով ինչպէս նաեւ մետաղի զտութեան եւ չափագիտական առումով այդ դրամները Մերձաւոր Արեւելքի դրամական տնտեսութեան ԺԳ.-ԺԴ. դարերի բնորոշ դրամներ են:*

11 Ռ. ՎԱՐԴԱՆԵԱՆ, *Լեւոն Ի-ի «ոսկէ դրամները»*, ՀԴՀ 1-2, 2012, էջ 3-30:

Նկար 13, Կիլիկեան երկդրամ, արծաթ,
Լեւոն Ա. թագաւոր 1198-1219

Նկար 14, Կիլիկեան դանգ, բրոնզ,
Լեւոն Ա. թագաւոր 1198-1219

Նկար 15, Կիլիկեան դրամ, արծաթ,
Հեթում Ա. թագաւոր եւ Զապէլ թագուհի, 1226-1270

Կիլիկեան Հայաստանում քաղաքային կեանքի պահանջով թողարկւում էին նաեւ պղնձեայ դրամներ: Դանգ կոչուած խոշոր պղնձեայ դրամներից չափագիտական տուեալները, իւրաքանչիւրը մօտ 7.40 գրամ քաշով էր: Թողարկւում էին նաեւ բարտէզ կոչուած պղնձեայ դրամները իւրաքանչիւրը մօտ 4.60 գրամ, որոնք յետագայում թողարկուեցին աւելի նուազ քաշով: ԺԴ. դարից սկսեց նուազել նաեւ արծաթի պարունակութիւնը դրամներում: Շրջանառութեան մէջ մտան թագաւորին կոչուող վատորակ արծաթ

դրամները՝ 2.20 գրամ միջին քաշով։ Դանգերի փոխարէն երեւան եկան՝ փող անունով պղնձեայ դրամները, որոնց կշռային չափերը աստիճանաբար նուազում էր։

Նկար 16, Կիլիկեան բարտեզ, պղինձ,
Լեւոն Գ. թագաւոր1301-1307

Պատկերագրական առումով առիւծի պատկերը քրիստոնէական խաչի նշանով հանդիսացել է Կիլիկիայի հայկական դրամների ամենաբնորոշ պատկերը եւ անզուգական մնացել Առաջաւոր Ասիայում թողարկուած միջնադարեան դրամների շարքում։ Ըստ պատկերատիպի Լեւոն Մեծի արծաթէ դրամները թողարկւում էին հիմնականում երկու տեսակներով, որոնք միմեանցից տարբերւում էին իրենց վրայ դրոշմուած առիւծների պատկերատեսակներով։ Դրամների մի խումբը մէկ առիւծի միւս խումբը՝ երկու առիւծների պատկերներով։ Սակայն այդ դրամների համար, որպէս կանոն մէկ ընդհանուր գրութիւն կար՝ ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ։ *Թագաւորը պատկերւում էր հանդիպահայեաց, բազմած առիւծազարդ գահին, արքայական պատմուճանով, թագը գլխին, աջ ձեռքին խաչ, ձախին՝ շուշան։ Միապետի այդ պատկերը չունէր անհատականութիւն բնորոշող տուեալներ, այլ ներկայանում էր պայմանականօրէն, խիստ հակիրճ գծերով։ Դարձերեսին ինչպէս ասուեց կամ մէկ կամ երկառիւծ պատկերներ, որոնք միշտ ներկայանում էին խաչ նշանով։ Գրութիւնները պատկերի շուրջ՝* ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ։ *Նշենք, որ Կիլիկիայի հայկական դրամների վրայ նրանց դրուագման տարեթիւը չէր յիշատակւում։*

Ի տարբերութիւն իշխանական դրամների Հեթումեանների օրօք Հայոց թագաւորները դրամների վրայ պատկերւում էին իբրեւ ձիաւոր՝ կրկին խաչը ձեռքին[12]*։*

12 Զ. ՊՏՈՒԿԵԱՆ, *Կիլիկեան Հայաստանի դրամները*, Վիեննա 1963, էջ 99:

Նկար 17, Կիլիկեան երկդրամ, արծաթ,
Կոստանդին Ա., թագաւոր 1298-1299

Նկար 18, Կիլիկեան դրամ, արծաթ,
Հեթում Ա. (1226-1269), Կայ Խոսրով Բ. (1237-1245),
հայերէն եւ արաբերէն արձանագրութեամբ

Կիլիկիայի դրամական տնտեսութեան մէջ նշանակալից էին նաեւ երկլեզուեան դրամները՝ հայերէն եւ արաբերէն արձանագրութիւններով թողարկուած արծաթէ դրամները։ Դրանք արտացոլում էին Հայոց թագաւորութեան եւ Իկոնիայի սուլթանութեան համատեղ թողարկուած դրամահատութիւնը։

Հայոց Կիլիկեան դրամների դրուագումը կատարուել է առաւելապէս պետութեան վարչական կենտրոններում՝ Սիսում, Տարսոնում, Այասում։ Թագաւորութեան վերջին շրջանի դրամներն իրենց որակով արտացոլում էին երկրի տնտեսութեան քայքայուած, սնանկացած վիճակը։ Ինչպէս արդէն նշեցինք առեւտրական աշխոյժ գործարքների շնորհիւ Հայոց Կիլիկեան դրամները հասել են մինչեւ Միջերկրականի, փոքրասիական, սիրիական, եգիպտական, բալկանեան եւ իտալական շուկաները։ Այդ է պատճառը, որ Մայր Հայաստանում Կիլիկեան հայկական պետութեան դրամները շրջանառութեան մէջ չեն եղել։

Ներկայումս Հայոց Կիլիկեան պատմութեան գիրկն է բայց նրա թագաւորների հատած հազարաւոր դրամները պահւում են աշխարհի յայտնի թանգարաններում ու վկայում Հայկական Կիլիկիայի երբեմնի գոյութեան մասին, որն ունեցել է ոչ միայն քաղաքական, մշակութային այլեւ խոշոր առեւտրատնտեսական գործունէութիւն միջնադարեան պետութիւնների շարքերում։

ԱՆԱՀԻՏ ՄՈՒՇԵՂԵԱՆ

Summary

ARMENIA AT THE JUNCTION OF INTERCULTURAL RELATIONS BETWEEN EUROPE AND ASIA IN THE 10th -14th CENTURIES ACCORDING TO NUMISMATIC DATA

ANAHIT MOUSHEGHIAN

Given the political circumstances of the time, Armenia did not have its own currency during the 11th to the 13th centuries, for which reason commercial activity had to be undertaken using coins minted and circulated by foreign conquerors. There had been a substantial reduction in the abundant flow of silver coins to Armenia due to external trade with the Orient in the final years of Bagratid rule.

There was a notable deficit in silver in the 11th century in the Byzantine Empire as well. Discoveries of coins testify to the fact that gold and copper Byzantine coins circulated in Armenia in the absence of silver. The circulation of coins in Armenia was going through a period when states from Central Asia to Asia Minor had ceased minting silver coins. From the 11th century on this so-called silver crisis in the money economy of the Orient lasted 200 years. Because of the silver crisis, Seljuk, Shaddadid, Eldiguzid, Georgian, and Mongolian coins were used in Armenia.

The Armenian kings of Armenian Cilicia, which lasted 300 years, minted gold, silver, copper, and billon coins for two centuries, for as long as Armenian Cilicia endured as a state.

Medieval Armenian national Cilician coin were engraved anew with Armenian writing. Active commercial activities took place with those coins in markets across the Mediterranean, Asia Minor, Syria, Egypt, the Balkans, and Italy. Such coins have been discovered as individual specimens and entire hoards not only in Cilicia, but also in various European countries. They are yet another testament to the fact that coins of Armenian Cilicia had an influential role to play in the economic interactions and trade relations of medieval states.